# ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

## ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ — ՈՒՐԲԱԹ 17 ՄԱՅԻՍԻ 1846 — ԹԻՒ 259.


## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՔ

Կոստանդնուպօլիս, 14 մայիսի։

Ճանապարհորդութիւն Օգոստափառ Արքային։

Վեհափառ Սուլթանը ամսիս 24ին մայրաքաղաքէս ելլելով, ամիրներէն դուրս փառաւոր վրանի մը տակ օթեւանեցաւ. ուր եւ մարդասիրաբար ընդունեց ամէն երեւելի պաշտօնատարները, որոնք պատիւ ունեցան ողջերթ ըլլալու Նորին Վեհափառութեան մինչեւ այն տեղը։

Օգոստափառ Սուլթանը իր սովորական քաղցրութեամբը պատուաւորելէն ետքը զանոնք, յատուկ յորդորանօք յանձնարարութիւն ըրաւ իւրաքանչիւրոց, որպէս զի հոգ տանին իրենց պաշտօնին կատարողութիւնը ճշդիւ եւ զգուշութեամբ գործի դնելու, հասարակաց անդորրութիւնը եւ բարեկարգութիւնը հաստատ պահելու համար։

Սան Ֆանոյէն մեկնելու ժամանակը Վեհափառ Արքան բարեհաճեցաւ որ իր առջեւը ներկայանան բոլոր երեւելի բնակիչները յիշեալ գեղին, եւ Մուքթեղին. որոնց՝ հանդարտ ասենութեամբ մը յայտնեց, թէ կայսերական սիրտը նստելէն 'ի վեր անդադար կաշխատի միշտ իր ժողովրդոց բարեբաղդութեանը համար, եւ թէ հիմակուան իր ըրած ճանապարհորդութիւնը ուրիշ խորհուրդ մը չէ, բայց միայն անձամբ տեսնել ըլլալու համար իր ժողովրդոց վիճակին. ուստի կը ցանկայ բոլոր սրտիւ, որ ամէնքը, թէ քրիստոնեայ եւ թէ տաճիկ մէկզմէկու հետ եղբօրպէս փարուէին միշտ միաբանութեամբ եւ սիրով։

Այս առենաբանութենէն ետքը Օգոստափառ Սուլթանը քանի մը երեւելի գեղացիներուն պատուոյ զգեստ բաժնել տալով, հրաման տուաւ որ իրենց տեղերնին երթան։

Վեհափառ Արքան ամսիս 27ին Սան Ֆանոյէն մեկնեցաւ իր բոլոր ուղեկից պաշտօնատարներովը դէպ 'ի Պէօյիւքչէքմէճէ ըսուած գեղը. ուր եւ բազմաթիւ գեղացիներ ծեր եւ տղայք ամէն կողմէն ժողվուեր էին Նորին Վեհափառութեան տեսութեանը արժանի ըլլալու համար։

Օգոստափառ Սուլթանը տեսնելով անոնց սրտին ուրախութիւնը շատ մխիթարեցաւ. եւ մարդասիրական ոգիէ շարժեալ հրաման ըրաւ իր բժշկապետին, որ յիշեալ գեղացի երիտասարդները եւ մանկունքները պատուաստել տայ ձրիապէս, որոնք գրեթէ ամէնքը դեռ պատուաստուած (աշըլանմըշ) չէին։

Օգոստափառ Թագաւորը նոյն գիշերը Պէօյիւքչէքմէճէ մնալով, հետեւեալ օրը ճամբայ ելաւ Ադրիանուպօլիս երթալու. ուստի մայիսի 2ին հասնելով, փառաւոր հանդէսով մտաւ յիշեալ քաղաքը, եւ այն տեղը՝ ըստ սովորութեանն ոսկի եւ արծաթէ դրամներ կտրեցին, որոնք Պօլսոյ դրամներէն ամենեւին տարբերութիւն մը չունին. միայն քաղաքին անունը յիշատակուած է վրան։

Վեհափառ Արքային մեկնելէն 'ի վեր կատարեալ հանդարտութիւն կը տիրէ քաղաքականութեան մէջ. իսկ Բարձրագոյն Դուռը շարունակաբար կաշխատի միշտ հաստատել եւ 'ի կախ մնացած գործքերը կարգի դնելու ըստ սովորութեանն։

Բազմաթիւ ալպանիացի ընտանիքներ կը գտնուէին Իւսքիւպի մէջ, որոնք թէպէտեւ առ երեւս մահմէտական կը ձեւանային, բայց գաղտնաբար քրիստոնէական կրօնից կը հետեւէին շատ տարիներէ 'ի վեր։ Այս բանը երեւան ելլելու ըլլար նէ, յիշեալ ընտանիքներուն շատ վնաս կրնար ծնանիլ իրենց քաղաքակից տաճիկներուն կողմանէ. վասն որոյ բարձրագոյն հրամանաւ Սէլանիկ խրկուեցան այն գերդաստանները, քանի մը պաշտօնատարաց վերակացութեամբը. որոնք ամենեւին հոգ չտանելով անոնց խղճալի վիճակին, եւ խիստ հարկաւոր բաներէն ալ զուրկ պահելով զանոնք, շատերը ճանապարհին մեռան։ Օսմանեան կառավարութիւնը այս տմարդի վարմունքը իմանալով, յանցաւորները խիստ պատժուեցան եւ յիշեալ խեղճ գերդաստանները Անհըլճ բերել տրուեցան. ուստի քաղաքական կառավարիչները, թէպէտեւ յատուկ հրամաններ ընդուներ էին Բարձրագոյն Դռնէն, այսու ամենայնիւ մարդասիրութիւն չը ցըցուցին ամենեւին նոյն գաղթականաց. որոնցմէ ամէն օր կը մեռնէին իրենց սաստիկ կարօտութեան պատճառաւը։ Այս հարկաւոր գոր-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

### ԱՆՏՕՆ ԿԱԼԼԱՆՏ

### ՕՐԷՆՔ

Բարք վարուց եւ սովորութիւնք։

(շարունակութիւն)

Եթէ եւս սիրտն երիկ կնիկ բաժնել ստիպել ուզեցած գնով. որպէս զի շատ գործք գտնեն. բայց առաւ ըլլէ բնին փառաբանելու համար, ալ աչքին չըկար. հանդչելու առեն չունէին անդադար աշխատանքէն. եւ բնաւ տխուր չէին ըներ, բնաւ Աստուծմէ չէին տրտնջեր, բնաւ ուրիշին ծառայ (հարէմ) խօրաթայ՝ տղայը չէին ըներ. գիտէին որ աս կուրէ անմեղ ըլլայ. եւ աչքերնին չարի կըբացվի. եւ ան առենէն կիմանան իրենց խեղճութիւնը։

Ես վախցուցած չորս տարի մը, ուր ներս ձերմակը ճերմակ ներկեալ երբոր կապէին, քաղաքին յիշեցին պարտէզին, ձմեռվան սկիզբները՝ դուռ բացուած կըլլար Կոլլանոց. աս դուռը տեղը կախեր. օրը՝ մէկ զարհուրելի օր մը էր. կծու ցուրտ մը, սառած անձրեւ մը, երկինք գետինք խառնած էին. եւ աս աշխատաւոր հայրը՝ որ խօսք տուեր էր ան շաբաթ օրը լմնցնելու, ըստ չըրաւ լմնցուց. հարուր զուռուշ վարձքը առաւ, փողէց տղըցը քով տունը եկաւ։ Այլ ինչ վիճակի մէջ տէր Աստուած. տունը քրտինք, ըմթերը խըխուժեցած, ցուրտը անձրեւը բոլոր մարմինը ծածկեր թափանցած եւ չիկերած չիմացած ընկաւ մահիճը։ Անկէ վերն եկաւ սաստիկ ջերմ մը, եւ ետեւէն չոր հազ մը. եւ բոլոր ջիղերը պաղեցան բռնվեցան. եւ ժամէ 'ի ժամ ուժը ճարը կտրելով՝ երկու օրէն մահուան դուռը հասաւ։ Խեղճ կին մեղքեց աղէկ զաւկները մէկիկ մէկիկ պագնելու՝ եւ բարով մնաք ըսելու։ Երբոր ան եօթնը՝ Աստուծը կըպագնէր, երեսնին զանգակը՝ երեկոյեան աղօթքը ընելու զարնեց. աս բարեպաշտ հայրը ուզեց երեսը խաչակնքել, բայց ձեռքը ճակտին չհասած՝ վար ինկաւ, եւ աղօթքին առջի բառը՝ որ պռկունքէն կելլէր, հոգին թռաւ.....

Ամ կրնայ հիմայ պատմել լացը ողբը ան օխտը որբերուն, եւ մանաւանդ ան նոր որբեվարիին, որ այնպիսի աղէկ երկիւղ զրկըւեցաւ զատուեցաւ. եւ այսքան որբերը հիմայ մինակ իր վրայ ինկան... ան հարուր զուռուշը որ բերաւ, ինչվան ո՛ր պիտի երթայ. ինչ ցաւ. ինչ յուսահատութիւն. մօտը ազգական մը չիկայ, բարեկամ մը չիկայ, բնաւ մարդ մը չիկայ. ով հիմայ այսքան ցաւերուն մէջ իրեն խըշխըշած սրտին՝ մէկ մխիթարական բանմը զուրցէ պիտի։

Որքան աս խեղճ տանը մէջ որբերուն ցաւը տրտմութիւնը սիրտ կըկըտրտէր, այնքան դուրսը դրացիները անհոգ անզգամ կեցան ո՛չ եկան ո՛չ գացին, միայն մէկ հիւանդ մը՝ տապանակ մը շինեց, մեռելը մէջը դնելու եւ թաղելու. եւ ան խաւրեց ըսելով, թէ աս ընծան (հէտիյէն) շատոնցմէ կուզէի ընել իրեն։ Տէր նախանձը թէ ինչվան ուր մարդուս սիրտը ապառաժ քար կընէ, եւ լեզուն կըլեզվնէ։

Երկու գերեզման փորողներ՝ եկան վերցուցին մեռելը, եւ որբեվարին՝ իր օխտը զաւկովը ետեւէն գացին գերեզմանատունը, հոն տեսան թաղումը եւ ծունկ չոքեցան ընկան գերեզմանին հողին վրայ լալով հեկեկալով աղօթք ըրին. եւ արցունքով հողը թրջեցին։

Խեղճ որբեվարին պէտք է հիմայ որ տունը դառնայ. մէկ նոր ցուրտ ցաւերուն վրայ որ զատելի պիտի երկինը գերեզմանէն։ Ինչեց երկու պզտիկներուն ձեռքը, մէկալները առջեւը ըրկան, քալելով աչքերը լեցուած, տէր Աստուած աս ինչ եղաւ ըսաւ. ո՛ւր կերթամ կոր օխտը զաւկներովս։ Երջանիկ է մայրը Շամուէլ, որ Մակա-

